

ՀԱՄԱՅՆՅԱԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

«Քսանմեկերորդ դարի մարտահրավերները և հայ երիտասարդությունը»

հուլիս 9-11, 2007 թ. Երևան

Խորհրդաժողովի հարգելի մասնակիցներ,

Ի սրտե ողջունում եմ Համաշխարհային հայկական կոնգրեսի հրավիրած Համահայկական երիտասարդական միջազգային ներկա խորհրդաժողովի բոլոր մասնակիցներին և մաղթում բեղմնավոր աշխատանք:

Նոր հարյուրամյակը իր պաշտոնական իրավունքների մեջ է մտել՝ նոր մարտահրավերներ ներկայացնելով համաշխարհային քաղաքակրթությանը: Աշխարհը այսօր մտահոգված է տնտեսական, տեխնոլոգիական, էթիկական, բնապահպանական, ժողովրդագրական և մշակութային հիմնախնդիրներով: Մարդկությունը փորձում է համատեղել ջանքերը ահաբեկչության դեմ պայքարում, աշխարհում տարբեր ծրագրեր ու գլոբալ միջոցառումներ են կազմակերպվում աղքատության, սոցիալական անարդարության և անհավասարության հաղթահարման ուղղությամբ և այլն:

Մոլորակի վրա տեղի ունեցող տեղաշարժերը և զարգացումները շոշափում են նաև Հայաստանի, Արցախի և համայն Սփյուռքի կենսական շահերը, և հայությունը, առավել ևս հայ երիտասարդությունը չեն կարող անտարբեր մնալ այդ մարտահրավերների հանդեպ: Մենք չենք կարող հանգիստ նստել և սպասել, թե ի՞նչ է տեղի ունենում աշխարհում, ինչ զարգացումներ են խմորվում, ինչ է սպասվում մեզ: Նոր հարյուրամյակը իր կոշտ ու դաժան մարտահրավերներով տեղ չի թողնում նման անհոգության համար:

Մենք իրոք բախվել ենք սկզբունքորեն նոր մասշտաբի ու բովանդակության մարտահրավերների, որոնց պահանջների ներքո պետք է ճիշտ կողմնորոշվենք և ճիշտ ընտրություն կատարենք: Նման իրողության պայմաններում 21-րդ դարը մեր ժողովրդի համար անհրաժեշտաբար դառնում է նոր պայմաններին հարմարվելու և գոյատևման համար համախմբվելու ժամանակաշրջան: Ազգային գոյապահպանությունը, բնականաբար, մեր առջև դնում է զարգացման

Ճիշտ ռազմավարություն մշակելու պահանջ, ռազմավարություն, որը կօգնի մեզ միավորելու մեր ժողովրդի, նրա յուրաքանչյուր հատվածի ջանքերը կենսագոյության ճանապարհին, հետ կանգնել մեր միասնությունն ու միաբանությունը ջլատող վարք ու բարքերից՝ հանուն հայ ժողովրդի կենսական շահերի պաշտպանության, նրա առջև ծառայած խնդիրների լուծման:

Ահա այդ մտահոգությամբ էր պայմանավորված Ռուսաստանի հայերի միության կողմից դեռևս 2002 թվականի հոկտեմբերին Մոսկվայում կազմակերպված «Աշխարհի հայերը դարերի սահմանագծին և միջազգային հարաբերությունների արդիական խնդիրները» միջազգային կոնֆերանսը: Աշխարհի մոտ 50 երկրներից ավելի քան 300 մասնակից ակտիվորեն քննարկեցին համայն հայության խնդիրների ողջ սպեկտրը: Կոնֆերանսի մասնակիցները որոշեցին ստեղծել Համաշխարհային հայկական կազմակերպություն, որը կոչված պետք է լիներ նպաստելու համազգային շահերի շուրջը հայերի միասնության ապահովմանը, Սփյուռքի հսկայական ներուժի օգտագործմանը Հայաստանի բարգավաճման, նրա պետականության ամրապնդման համար:

Այդ կոնֆերանսից ուղիղ մեկ տարի անց Մոսկվայում տեղի ունեցավ Համաշխարհային հայկական կոնգրեսի հիմնադիր համագումարը, որը կանոնադրորեն հռչակեց կազմակերպության գլխավոր նպատակը՝ նպաստել հայ ժողովրդի համախմբման և ջանքերի միատեղման գործընթացի արագացմանը՝ հանուն համազգային շահերի պաշտպանության, հայության առջև ծառայած խնդիրների լուծման:

Արդեն շուրջ 4 տարի Կոնգրեսը դուրս է եկել գործունեության լայն ճանապարհ և իր կանոնադրական նպատակների կատարման գործում հասել շոշափելի հաջողությունների: Ես այսօր չեմ ուզում մանրամասնել Կոնգրեսի գործունեությունը: Այսօր մենք հետապնդում ենք այլ նպատակ, այն է՝ ընթացիկ հարյուրամյակի մարտահրավերների համատեքստում քննարկել համազգային շահերի և իրավունքների պաշտպանության շուրջ հայ երիտասարդության համախմբման հետ առնչվող խնդիրները:

Համաշխարհային հայկական կոնգրեսի գործունեությունը միտված է ապագային, իսկ ապագան պատկանում է երիտասարդությանը, առանց որի հեռու գնալ չենք կարող: Ահա թե ինչու Կոնգրեսը հետևողական է երիտասարդության հետ տարվող աշխատանքը որակական նոր

մակարդակի բարձրացնելու, կոնգրեսի գործունեության մեջ նրանց ներգրավելու ուղղությամբ:

Արդեն մեկ տարի է, ինչ մեկնարկել է Կոնգրեսի Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիան, որի առաջարկությամբ էլ հրավիրվել է այս խորհրդաժողովը:

Այսօրվա մարտահրավերները առաջին հերթին շոշափում են մեր երիտասարդ ժամանակակիցների շահերը: Ներկա կոնֆլիկտային աշխարհում բախումների, ռազմական ընթարումների հորձանոտում ամենից շատ տուժում և զրկանքներ է կրում հենց երիտասարդությունը: Ուստի հենց երիտասարդությունն էլ պետք է լծվի խաղաղության կուլտուրային և ժողովրդավարության զարգացման գաղափարի իրագործմանը:

Երիտասարդությունն է առաջին հերթին տառապում տնտեսական ճգնաժամերից, սոցիալական ցնցումներից և բնականաբար հենց երիտասարդությունն էլ պետք է գիտակցի դա և ակտիվորեն մասնակցի կայուն զարգացման գաղափարի իրագործմանը:

Հենց երիտասարդությունը պետք է առաջին հերթին վերափոխվի, յուրացնի մոլորակային նոր էթիկան, արժեքային նոր համակարգը և սովորի ապրել դրանցով թելադրված պայմաններում:

Աշխարհի զարգացման նոր որակական փոփոխության նախաշեմին առանձնահատուկ դեր է վերապահված հայ երիտասարդությանը: Այդ առանձնահատկությունը բխում է մեր պատմական ճակատագրից: Յուրաքանչյուր ազգի համար նոր մարտահրավերները մեծապես պայմանավորված են նաև նրա պատմությամբ, անցած ուղով և ներկա իրավիճակով: Ո՞րն է հայերիս պատմական իրողությունը: Թերևս եզակի մի ազգ, որի մեծագույն մասն ապրում է պատմական հայրենիքից դուրս, Սփյուռքում, որը ողբերգական անցյալի հետևանք լինելով հանդերձ՝ մեծ հնարավորություններ ու ներուժ ցուցաբերող բաղկացուցիչ է դարձել հայ ժողովրդի կյանքում:

Աշխարհասփյուռ հայության, հայ երիտասարդության համար դարի մարտահրավերներին դիմագրավելու թիվ մեկ ու կարևորագույն պայմանը համախմբվելն է: Մենք պետք է գիտակցենք, որ հայության փրկությունը, Չարենցի խոսքերով ասած, մեր հավաքական ուժի մեջ է: Առանց միասնության, առանց ջանքերի միավորման մենք կենսունակ չենք ու չենք կարող դիմագրավել սեփական գոյությանը նետված մարտահրավերներին:

Ներկա իրավիճակում ողջ հայ ժողովրդի համար բացառիկ գերակայություն ունեցող խնդիրը անկախ Հայաստանի և հայոց պետականության պահպանումն ու ամրապնդումն է: Տնտեսապես, սոցիալապես հզոր Հայաստանն է այն վահանը, որը կարող է պաշտպանել համայն հայությանը ոչ միայն դարի, այլև հազարամյակի մարտահրավերներից:

Այդ խնդիրները լուծելու համար շատ անելիքներ ունեն ոչ միայն հայաստանաբնակները, այլև համայն Սփյուռքը: Այստեղ մեր երիտասարդությունը, և հատկապես սփյուռքահայ երիտասարդությունը պետք է գիտակցի, որ եկել է ժամանակը, որպեսզի պատմական հայրենիքի նկատմամբ զգացմունքային վերելքի մթնոլորտից տեղափոխվենք գործնական աշխատանքի դաշտ, միասնաբար լուծենք այն խնդիրները, որոնք դրված են Հայաստանի առջև:

Այս խորհրդածողովը տեղի է ունենում Լեռնային Ղարաբաղի շուրջը լարվածության ուժեղացման պայմաններում: Ադրբեջանի ղեկավարությունը իր ռազմատենչ հայտարարություններով փորձում է ստվեր գցել հանրաճանաչ իրավական ակտերով հակամարտության կարգավորման խնդրի վրա:

Այսօր եկել է ագրեսիվ հարևանից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության համար համաշխարհային ահազանդ հնչեցնելու ժամանակը: Այս հարցում լուրջ դեր կարող է կատարել հատկապես երիտասարդությունը: Տարբեր երկրներում բնակվող ձեր հասակակիցների միջոցով դուք կարող եք Ղարաբաղի հիմնահարցի արդարացի լուծմանը նպաստող բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտ ստեղծել, որը վիթխարի դեր կարող է խաղալ հակամարտության կարգավորման գործում:

Նույն մոտեցումը պետք է որդեգրել նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և հետևանքների վերացման առումով:

Այսօր չի կարող երաշխավորված լինել Հայաստանի անվտանգությունը, երբ Թուրքիան արդեն պատմական դարձող համառությամբ շարունակում է ժխտել Թուրքիայում իրականացված գազանությունը: Ավելին, դիվանագիտական ճանապարհներով էլ փորձում է ամեն կերպ խոչընդոտել այլ պետություններում Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը:

Համաշխարհային հայկական կոնգրեսը այս հարցի առնչությամբ մեծ աշխատանքներ է տանում և կոչ է անում երիտասարդությանը ակտիվորեն ներգրավվել այդ աշխատաքներին:

Երիտասարդներն են ներկայիս ամենատարածված գործիքի՝ ինտերնետի հաճախակի այցելուներն ու տիրապետողները, մինչդեռ գլոբալ այդ ցանցը հնարավորություն է տալիս առավել մեծ թվով մարդկանց իրազեկել ճշմարտությունը Հայոց ցեղասպանության, Ղարաբաղի հիմնահարցի մասին՝ ակնկալելով նրանց ակտիվությունը այդ խնդիրների լուծման գործում:

Դարի մարտահրավերիների համատեքստում մեր համազգային կյանքի օրակարգի կարևորագույն խնդիրներից են հայրենիքի հետ Սփյուռքի կապերի ամրապնդումն ու զարգացումը, հայության ինքնության պահպանումը Սփյուռքում և էլի շատ ու շատ խնդիրներ, որոնց լուծումը ևս հայ երիտասարդության ակտիվ մասնակցությունն է պահանջում:

Բոլոր այս խնդիրները խորհրդածողովի օրակարգում են, և այսօր երիտասարդները կփորձեն գտնել քայլերի ու գործողությունների այն շրջանակը, որը կարող է նպաստել 21-րդ դարի մարտահրավերների հազթահարմանը:

Թույլ տվեք այս ակնկալիքներով էլ Համահայկական երիտասարդական միջազգային խորհրդածողովը հայտարարել բացված: